



Թիւնը

# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւն 23445  
Մարտ 24, 1972

Արժանաշնորհ  
Տ. Արսէն Քնյ. Պարսամեան  
Հովհան Ս. Յակոբ Եկեղեցւոյ  
Նախագահ ծխական Խորհուրդի  
Ռիշմընտ.

Սիրելի Տէր Արսէն,

Ստացած ենք 1972 Մարտ 21 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հա-  
ղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Փետրուար 20ին գումարուած Ձեր ծխա-  
կան ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի չորս անդամոց ընտ-  
րութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը ինդրէք  
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք  
ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Դանեսէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր  
Դիւանի անդամոց եւ Եկեղեցւոյդ Ենթակայ մարմիններու ատենապետներու  
անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օր 9 ներկա ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունեութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Սկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՒՄ ԱՐՁԵՎԻՍԿՈՎՈՒՄ  
Առաջնորդ

Հայկ Կիրակոսեան, Ժիրայր Շարիկեան,  
Պետրոս Պանսագեան, Տքի. Յակոբ Կարեան